## Դասերի առցանց պլանավորման 12 հավելվածներ

1. Jotform
2. Planbook
3. Planboard
4. iDoceo
5. Google Classroom
6. Common Curriculum
7. OnCourse
8. Standards Planner
9. PlanbookEdu
10. Teachers.io
11. Evernote
12. Core Learning Exchange

Դասապլանների ստեղծումը ուսուցման կազմակերպման գործընթացում խիստ կրևոր է թե ուսուցչի աշխատանքի կազմակերպման և թե սովորողների կրթական ձեռքբերումների գնահատման տեսանկյունից: Ունենալով ճիշտ և համակարգված դասի պլան ուսուցիչը հստակրեն կարող է իրականացնել ոչ միայն տվյալ օրվա այլ նաև որոշակի ժամանակահատվածի (շաբաթ, ամիս, կիսամյակ, ուս. տարի) համար հստակ սահմանված չափորոշչային նպատակները:

Շատ ուսուցիչներ ապավինում են թղթային պլանավորմանը՝ ընթացիկ դասերին հետևելու համար: Այժմ թվային գործիքներն ավելի հեշտացնում են նաև դասապլանավորման գործընթացը: Դասապլանավորման տարատեսակ թվային հավելվածներ կան և ուսուցիչն ունի ընտրության մեծ հնարավորություն:

Դասապլանավորման առցանց հավելվածներով աշխատանքը վեր է հանում դրանց առավելությունները ավանդական մոտեցումների նկատմամբ՝ դարձնելով գործընթացը ավելի հեշտ և արագ:  Դասերի պլանավորման գործընթացում տեխնոլոգիաների ինտեգրումը թույլ է տալիս կենտրոնանալ այլ պարտականությունների վրա:

Ահա դասերի պլանավորման լավագույն 12 թվային գործիքները.

## 1. Jotform

Այս թվային հավելվածը օգտագործվում է ոչ միայն դասերի պլանավորման համար, այլև հնարավորություն է տալիս ստեղծելու սովորողների անհատական տվյալների ձևանմուշներ։



**Student Registration Form**
Fill out the form carefully for registration

Student Name: First Name / Middle Name / Last Name

Birth Date: Month / Day / Year

Gender

Address: Street Address / Street Address Line 2 / City / State / Province / Postal / Zip Code

Student E-mail: ex: myname@example.com
example@example.com

Mobile Number: Area Code – Phone Number

## 2. Planbook

Planbook-ը պլանավորման հանրաճանաչ գործիք է։ Ստեղծված դասապլանները, առցանց գրաֆիկները կարելի է հեշտությամբ վերադասավորել և օգտագործել նոր կամ փոփոխված ուսումնական ժամանակահատվածի համար։




## 3. Planboard

Planboard-ը առցանց պլանավորման անվճար գործիք է, որը թույլ է տալիս հետևել ձեր աշակերտների առաջընթացին՝ տեսնելու, թե ինչպես է այն համապատասխանում տվյալ ժամանակահատվածի չափանիշներին: Դուք կարող եք նաև կիսվել դասերի պլաններով գործընկեր ուսուցիչների հետ:




## 4. iDoceo

iDoceo հավելվածի միջոցով հնարավոր է պլանավորել դասասենյակի դասավորությունը, աշխատել դասակարգումների հետ և նույնիսկ ավելացնել ձեռագիր նշումներ։ Այն նաև առաջարկում է գնահատականների գրքույկ, որը ներառում է հաճախումները և թույլ է տալիս հետևել վիճակագրությանը և հաշվարկել գնահատականները։




## 5. Google Classroom

Google Classroom is a popular choice, offering teachers an all-in-one solution to plan, manage, and measure learning experiences. Not only are these tools easy to use and accessible from anywhere, but they're built for collaboration. For example, teachers and students can edit the same document simultaneously and use Google Meet to talk face to face.

Google Classroom

Google Classroom-ը հանրաճանաչ հավելված է, որն ուսուցիչներին առաջարկում է ուսուցման գործընթացը պլանավորելու, կառավարելու և չափելու համընդհանուր լուծումներ։ Այս հավելվախը ոչ միայն հեշտ է օգտագործման համար և հասանելի է ցանկացած վայրից, այլև նախատեսված է խթանելու համագործակցությունը։ Օրինակ՝ ուսուցիչներն ու ուսանողները կարող են միաժամանակ խմբագրել նույն փաստաթուղթը և օգտագործել Google Meet՝ դեմ առ դեմ խոսելու համար։




## 6. Common Curriculum

[Common Curriculum](#) հավելվածը ինտեգրվում է Google Classroom-ի հետ: Հավելվածի եզակի առանձնահատկություններից մեկը՝ Dropbox-ից կամ Google Drive-ից հավելվածներ կամ ֆայլեր ավելացնելու հնարավորությունն է:




## 7. OnCourse

OnCourse դասերի պլանավորման միջոցով դուք կարող եք հեշտությամբ պլանավորել ոչ միայն ընթացիկ դասերը այլև ուսումնական գործընթացում տարաբնույթ կազմակերպչական աշխատանքներ: Եթե օրինակ տվյալ դասը սխալ եք տեղադրել, ապա կարող եք այն որոնել ըստ բանալի բառի՝ այն վեր հանելու համար:

Այս գործիքը նաև թույլ է տալիս ներկայացնել դասերի պլաններ և ստանալ հետադարձ կապ կենտրոնական թվային հարթակի վրա:




## 8. Standards Planner

Standards Planner-ի միջոցով կարող եք կոորդինացնել ձեր ժամանակացույցը, կապվել Google Օրացույցի հետ և կազմակերպել ձեր աշխատանքային հոսքը՝ քաշել և թողնել ռեսուրսների միջոցով: Այլ հնարավորություններ օգնում են շփվել ադմինիստրատորների և ծնողների հետ՝ ցույց տալու ընթացիկ առաջընթացը և առաջիկա դասերը:




9. PlanbookEdu

PlanbookEdu-ն օգտագործվում է համագործակցելու, ծնողների և ուսանողների հետ կիսվելու, կատարված աշխատանքները այլ կայքում տեղադրելու համար: Այս թվային գործիքը գտնվում է ամպային տիրույթում, ինչը նշանակում է, որ դուք կարող եք կիրառել այն ցանկացած վայրից, նույնիսկ հեռախոսից:




10. Teachers.io

Teachers.io-ի միջոցով հեշտ է շփվել սովորողների հետ, պլանավորել և ստեղծել առաջադրանքներ, կազմակերպել դասերը՝ ավելացնելով ուսումնական պլան և հավելվածներ, հայտարարություններ ուղարկել ուսուցիչներին և ծնողներին:




## 11. Evernote

Նշումներ անելու այս հավելվածը նաև հրաշալի միջոց է ուսուցչի աշխատանքի պլանավորման համար՝ ընդարձակ նշումներ, ավելացնելով հավելվածներ և սահմանելով վերջնաժամկետներ:



## 13. Core Learning Exchange

Core Learning Exchange-ի միջոցով կարելի է պլանավորել դասերը, տեղափոխել, վերախմբագրել դրանք, սովորել բովանդակության կառավարման նոր հմտություններ և օգտագործել ուսումնական ծրագրերի ձևավորման նոր գործիքներ: Վերլուծությունները և հաշվետվությունները օգնում են ինքնագնահատման և ադմինիստրատորների հետ հաղորդակցվելու հարցում:

